

Translations from Armenian into Swedish, 1991 to date

a study by the Next Page Foundation in the framework of the Book Platform project

conducted by Vahagn Avedian¹ and translated from English into Armenian by Gohar Meliksetyan

¹ The author is editor-in-chief of www.armenica.org and a Ph.D. candidate at the Department of History, Lund University

This text is licensed under Creative Commons



21-րդ դարում բառացիորեն գոյություն չունեն գրական կապեր Հայաստանի և Շվեդիայի միջև: Թեև Շվեդիան այլ լեզուների և մշակույթների համար բաց մշակութային քաղաքականություն է վարում, սակայն թվում է, թե Հայաստանը բոլորովին գոյություն չունի շվեդական մշակութային քարտեզում: Թեպետ շվեդական գրքարտադրության² 30%-ը կազմում են այլ լեզուներից թարգմանությունները, սակայն 1991 թվականից ի վեր հայերեն բնագրի կամ հայ հեղինակի որևէ թարգմանություն չի արվել:

Նմանապես թույլ են եղել գրական կապերը խորհրդային ժամանակաշրջանում. ողջ նախախորհրդային շրջանից միայն երկու գրքանուն կարելի է հայերենից թարգմանություն համարել:

1. *Hajastan* [Berättare från Armenien], Ragnhild Norlin-Svenning (ed.), translated by Carl Elof Svenning, 1968, Lidingö: Internationella bokklubben

2. Karen Simonian: *Tstesutyun Natanael* [På återseende, Natanael!], translated by Torsten M. Nilsson, 1979, Fripress

Առաջին՝ «Հայաստանից հեքիաթներ» գրքանունը հայերեն հեքիաթների ժողովածու է, որը կազմել է Ռազնհիլդ Նորլին-Սվեննինգը, իսկ թարգմանել է շվեդ բանաստեղծ Կարլ Էլոֆ Սվեննինգը. տիրապետում է ավելի քան տասը լեզուների և բազմաթիվ ստեղծագործություններ է թարգմանել շվեդերեն:

Երկրորդը մանկա-պատանեկան գիրք է, թարգմանել է ռուսերեն լեզվի ուսուցիչ Թորսթեն Մ. Նիլսոնը, ով նաև թարգմանիչ է ու արտահաստիքային լրագրող:

² Շվեդ հրատարակիչների ասոցիացիայի վիճակագրությունը, Rapport från Svenska Förläggareföreningen, SvF, Bransch statistik 2011, http://forlaggare.se/media/47293/svfstat_2011_web.pdf



Բացի այդ, մեզ հաջողվեց առանձնացնել XII դարի հայ կաթողիկոս Ներսես Շնորհալու աշխատությունը, որը թարգմանվել է շվեդերեն և 1892 թ. տպագրվել Վենետիկի Մխիթարյան միաբանությունում:

3. *Armenianska patriarken S. Niersis Clajensis Böner* [The Prayers of Patchriach Nerses Shnorhali], Venice, 1852

Գրական կապերի բացակայությունը հետևանք է նաև Հայաստանի մասին շվեդների իսպառ անտեղյակության: Բավականին փոքր և համեմատաբար նոր է հայկական համայնքը Շվեդիայում (շուրջ 8 հազար մարդ). ներգաղթածների մեծամասնությունը Շվեդիա է եկել 1980-ականների սկզբին: Երկու երկրների միջև փոխադարձ զրուսաշրջությունը բավականին թույլ է, սակայն Google-ի որոնմամբ կարելի է գտնել բազմաթիվ բլոգեր և Հայաստան այցելելու առաջարկներ, իսկ այդ երևույթը ինքնին ենթադրում է, որ Հայաստանի նկատմամբ հետաքրքրությունը կարող է խթան հանդիսանալ այլ ոլորտների, մասնավորապես հայոց լեզվի և գրականության տարածման ու զարգացման համար:

Միաժամանակ, կա թարգմանիչների պակաս: Չկան ոչ բուհական, ոչ էլ միջնակարգ-մասնագիտական մակարդակին համարժեք հայերեն դասընթացներ, մինչդեռ շատ են համալսարանական մակարդակի պարսկերեն, քրդերեն, թուրքերեն կամ վրացերեն դասընթացները:

Վերջերս գործարկվել է հանրակրթական մակարդակի բազային հայերենի նոր ծրագիրը:

Շվեդ ընթերցողներին հայ գրականությանը ծանոթացնելու միակ եղանակը, անշուշտ, հայտնի հայ գրողների էպիկական/դասական վեպերի կամ, գուցե նախընտրելի է, մանկական պատմվածքների ընտրանին հայերենից շվեդերեն թարգմանելու և հրատարակելու ծրագրի ֆինանսավորումն է: Այս գրքերը կարող են



Թարգմանվել իրազեկ բնիկ շվեդախոսների կամ երկու թարգմանիչների կողմից և տպագրվել Հայաստանում, որտեղ, Շվեդիայի համեմատ, ծախսերն ավելի քիչ են:

Նշում մատենագրական տեղեկատվության և աղբյուրների վերաբերյալ

Առկա մատենագրական աղբյուրների նկատմամբ հարկ է զգուշություն ցուցաբերել հատկապես քիչ տարածված լեզուների դեպքում, ինչպիսին հայերենն է: Սույն հետազոտության համար կիրառվել է երկու աղբյուր՝ շվեդական ազգային գրականության ծառայությունը (<http://www.libris.kb.se>) և ՅՈՒՆԵՍԿՕ-ի Index Translationum կայքը:

Շվեդիայի ազգային գրադարանը ցուցակագրել է «հայերենից թարգմանությունների» ութ (8) գրքանուն: Սակայն, ավելի խորը հետազոտությունը ցույց տվեց որ ութ գրքանուններից հինգը իրականում արամեերենից են և սխալմամբ են ցուցակագրվել որպես «հայերեն»:

Այսպիսով, հայերենից շվեդերեն թարգմանությունների ամբողջական ցուցակը սահմանափակվում է երեք գրքանունով, որոնցից մեկը թարգմանվել է միջնորդ լեզվից՝ ռուսերենից:

Index Translationum-ը ցուցակագրել է երեք գրքանուն՝ ներառելով վերը նշված Կարեն Սիմոնյանի գիրքը: Մյուս երկուսը իրականում հայերենից թարգմանություն չեն:

- 1/2 Erzinkian-Lorelli, Sourène; Fjäll, Göta M.; Zubery, Anna: Sagor från Kaukasien [Swedish] / Hédé: HLT [Sweden], 1995. 105 s. ill. [Georgian], [Armenian], [Kabardian-Cherkess]



Ըստ գրքում հեղինակի կնոջ գրած նախաբանի՝ այն հայերեն և վրացերեն պատմվածքների ժողովածու է (հեղինակը վրացահայ է), որը պատմել/գրի է առել իր ամուսինը: Կինը ամուսնու մահից հետո տպագրել է այդ ժողովածուն շվեդերեն լեզվով:

- 2/2 (Dunér, Anna; Räder, Andrea): Ängeln vid Aplaryds stup [Swedish] (ISBN: 91-7195-744-8) / Örebro: Libris, Helsinki: Fontana media [Sweden], 2006. 135, 2 s., ill. [Danish], [Armenian], [Portuguese], [Norwegian]

Սա հայտնի շվեդ հեղինակ Սելմա Լագերլյոֆի պատմվածքների ժողովածուն է, որը թարգմանվել է բազմաթիվ լեզուներով, այդ թվում՝ հայերեն, բայց ոչ հակառակը:

